ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐ - 9-րդ դասարան - 90 բոպե

1. Պնդումներից որը չի համապատասխանում «Հայկ և Բել» վիպերգի բովանդակությանը:
1) Հայկը հայ ժողովրդի անվանադիր նախնին է:
2) Հայկը չի հնազանդվում բռնակալ Բելին և հեռանում է Բաբելոնից:
3) Բելի պատգամաբերներին հաջողվում է հաշտեցնել երկու հսկաներին:
4) Հայքի գավառները կոչվում են Հայկի որդիների և թոռների անուններով:

2. Ո՞ր պնդումն է ճիշտ «Տիգրան և Աժդահակ» վիպերգի վերաբերյալ:
1) Տիգրանը և Աժդահակը սերում էին նույն զարմից:
2) Աժդահակի լարած դավադրության մասին Տիգրանը լսում է իր զորապետերից:
3) Տիգրանը Աժդահակի առաջին կնոջը՝ Անույշին և նրա տոհմի վիշապազուներին գերելով՝ բնակեցնում է Մասիսի արևելյան ստորոտին:
4) Տիգրանը վարում էր ցոփ ու շվայտ կյանք՝ գողթան երգիչներին ստիպելով գովերգել իր քաջությունը:

3. Ո՞ր պնդումն է ճիշտ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգի վերաբերյալ:
1) Վիպերգի ստեղծվել է մ.թ. 3-դարում:
2) Վիպերգում Արան սիրահարվում է Շամիրամին և հեռանում Հայաստանից:
3) Արան մերժում է Շամիրամի առաջարկը՝ խստությամբ պատասխանելով Շամիրամի պատգամաբերներին:
4) Շամիրամը իր շնակերպ աստվածների միջոցով վերակենդանացնում է Արա Գեղեցիկին:

4. Ո՞ր պնդումն է սխալ «Արտաշես և Սաթենիկ » վիպերգի վերաբերյալ:
1) Արտաշեսը հարձակվում է ալանների վրա և ավերում նրանց երկիրը:
2) Արտաշեսի զորքը առաջին ճակատամարտի ժամանակ պարտության է մատնում ալաններին՝ գերեվարելով նրանց պատանի թագաժառանգին:
3) Արտաշեսը տեսնում է ալանների գեղանի դստերը և լսելով նրա իմաստուն խոսքերը՝ սիրահարվում է նրան և առաջարկում հաշտության դաշինք:
4) Արտաշեսի հարսանիքի ժամանակ «ոսկի անձրև էր տեղում և մարգարիտ էր տեղում Սաթենիկի հարսնության ժամանակ»:

5. Ո՞ր պնդումն է սխալ հայ բանահյուսական վիպերգերի վերաբերյալ:
1) Բոլոր վիպերգերում գործում են հերոսական հայ կանայք:
2) Հայաստանը երբեք չի մղել նվաճողական պատերազմներ:
3) Հայոց զորքերը հավատարիմ են եղել իրենց թագավորներին:
4) Այս վիպերգերը արտահայտում են մեր ժողովրդի մարդասիրական գաղափարները, հավատալիքները, ազատատենչությունը:

6. Ո՞ր պնդումն է սխալ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» մատյանի վերաբերյալ:
1) Խորենացին իր մատյանը շարադրել է Սահակ Բագրատունու պատվերով:
2) Խորենացին չի օգտվել որևէ աղբյուրից և չի պահպանել ժամանակագրությունը:
3) Խորենացու մատյանը հայ ժողովրդի ծննդյան վկայականն է:
4) Խորենացու շնորհիվ մեզ են հասել հայ հին բանահյուսության մարգարիտներ:

7. Ո՞ր պնդումն է ճիշտ Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմի» մատյանի վերաբերյալ։
1) Եղիշեն եղել է Ավարայրի ճակատամարտի մասնակիցն ու ականատեսը։
2) Եղիշեն չի ստացել կրթություն և չի տիրապետել որևէ օտար լեզվի։
3) Եղիշեի մատյանում չկան հայրենասերներ և հայրենադավներ։
4) Եղիշեն զոհվել է Ավարայրում և նրա անունից հանդես է եկել մեկ այլ պատմիչ։

8. Ո՞ր պնդումն է ճիշտ Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանի վերաբերյալ։
1) Կորյունն իր մատյանը գրել է Մեսրոպ Մաշտոցի պատվերով։
2) Կորյունն ապրել և ստեղծագործել է IV դարում։
3) Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանը հայ վարքագրության մեծարժեք գանձերից է։
4) Կորյունը Մաշտոցի կենդանության օրոք չի ճանաչել նրան։

9. Ո՞ր պնդումն է ճիշտ «Սասունցի Դավիթ» էպոսի վերաբերյալ։
1) Էպոսը ստեղծվել է VII-X դարերի ընթացքում, սակայն արմատները մխրճված են վաղնջական ժամանակներում։
2) Էպոսի հերոսները տարբեր ընտանիքների ներկայացուցիչներ են։
3) Էպոսում չկան առասպելաբանություններ. բոլոր հերոսները պատմական են։
4) Էպոսում գործող անձինք չունեն ընտանիք։

10. Ո՞ր պնդումն է ճիշտ Պետրոս Դուրյանի «Լճակ » բանաստեղծության վերաբերյալ։
1) Պետրոս Դուրյանը իր ալեկոծ հոգին «բացում է» միայն լճակի առջև։
2) Լճակը չի ընդունում բանաստեղծին և ալեկոծվում է՝ բողոքելով իր հանգիստը խանգարողի դեմ։
3) «Լճակ»-ում չկան համեմատություններ, չկա անձնավորում։
4) Բանաստեղծը բավարարված է լճակի ընկերակցությունից։

11.Ո՞ր պնդումն էճիշտ Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի վերաբերյալ։
1) «Փարվանա» բալլադի հիմքում ընկած է ժողովրդական ավանդություն՝ աղջկա կործանված սիրո և արցունքներից գոյացած լճի մասին։
2) Քաջարի կտրիճները բերում են անշեջ հուրը, և նրանցից մեկը տիրանում է գեղեցկուհուն։
3) Արքայադուստրը իր սերը նվաճելու եկած իգիթների մրցույթը անարդար չի համարում։
4) Աղջիկը հոգնում է երկար սպասելուց և ընտրում էկյանքի ընկեր։

12. Ո՞ր պնդումն է ճիշտ Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի հերոսի վերաբերյալ։
1) Գևորգը չէր արժանացել գործատուի և նրա դստեր՝ Շարլոտայի համակրանքին։
2) Մեծահարուստ հյուրերը, լսելով շնորհալի պատանու հոգեթով երգը, որոշում են հանգանակություն կազմակերպել՝ նրան արտասահման ուղարկելու համար։
3) Բոլոր հյուրերը կատարում են իրենց խոստումը՝ բացի Սոմարյանից։
4) Գևորգը մեկնում է արտասահման և մեծ երգիչ դառնում։

13. Ո՞ր պնդումն է սխալ «Սասնա ծռեր» էպոսի հերոսների վերաբերյալ։
1) Էպոսի հերոսները ունեին ջրային ծագում և իրենց զորությունը ստանում էին ջրից։
2) Սանասարն ու Բաղդասարը հիմնում են Սասունը՝ կառուցելով իրենց բերդը։
3) Էպոսում բացակայում է ժողովրդի կերպարը։
4) Էպոսի գլխավոր ճյուղը «Սասունցի Դավիթ» ճյուղն է։

14. Ո՞ր պնդումն է սխալ հայ հին բանահյուսության վերաբերյալ :

1) Բանահյուսությունից մեզ են հասել բազմաթիվ առասպելներ և վիպերգեր, երգեր:
2) Բանահյուսության նյութը ժողովրդական ասքերն են, գողթան երգերը, որոնք պատմում են մեր ժողովրդի կյանքի, ծագման, հայրենասիրության ու ազատասիրության մասին:
3) «Վահագնի ծնունդը» առասպելը ներկայացնում է ռազմի աստված Վահագնի ծնունդը, որը տիեզերքը կազմող չորս հիմնական տարրերի մարմնացումն է:
4) Վահագնը կռվել է տիեզերքը կործանել կամեցող չար հողմերի՝ վիշապների դեմ և ստացել «վիշապաքաղ» անունը:

15. Ո՞ր պնդումն է սխալ Սասունցի Դավթի վերաբերյալ:

1) Դավիթը մեծանում է Սասունում՝ իր ծնողների խնամակալության ներքո:
2) Դավիթը մեր էպոսի ամենասիրված կերպարն է, ժողովուրդը նրա կերպարում խտացրել է իր նվիրական երազանքները:
3) Դավիթն ամուսնանում է գեղեցկուհի Խանդութի հետ, նրանք ունենում են մեկ զավակ՝ Փոքր Մհերը:
4) Դավիթն ու Մհերը մենամարտում են . մենամարտի ժամանակ Դավիթը ճանաչում է իր որդուն:

16. Ըստ ժամանակագրության դասավորել 5-րդ դարի պատմիչների անունները:

1.Եղիշե, 2.Հովհաննես Դրասխանակերցի, 3.Թովմա Արծրունի, 4.Ագաթանգեղոս,
5. Փավստոս Բուզանդ, 6.Ստեփանոս Օրբելյան, 7.Մեբեռս, 8.Թովմա Արծրունի:

17. Ըստ հաջորդականության նշել Պետրոս Դուրյանի ստեղծագործությունները:

1. «Վարդ և Շուշան կամ հովիվք Մասյաց», 2. «Կայծեր»,
3. «Աշխարհաբարի քերականություն», 4. «Անկումն Արշակունյաց հարստության»,
5. «Դանթեական առասպել», 6. «Հառաչանք», 7. «Սամվել», 8. «Տրտունջք»:

18. Ըստ հաջորդականության դասավորել Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» տաղի տողերը.

1. Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում
2. Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե
3. Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ

19. Հաջորդական համարներով նշել Թումանյանի ստեղծագործությունները:

1. «Լճակ», 2. «Անուշ», 3. «Լուսամփոփի պես աղջիկ», 4. «Իմ ընկեր Նեսոն»,
5. «Առաքյալը», 6. «Նաիրյան դալար բարդի», 7. «Թմկաբերդի առումը»:

20. Նշել հատվածների ճիշտ հաջորդականությունը:

1. Գագաթներդ՝ բյուրեղ վրան
   Թափառական ամպերի .....
2. Սեգ ժայռերդ արծվի բույն,
   Լճակներդ՝ լույս-փերուզ...
3. Դու, Արագա՛ծ,ալմաստ վահան
   Կայծակնեղեն թրերի.....

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան